

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և սուր օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խառնաչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Կ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Գրական գործողների խորհրդակցութիւն.—
Ներքին Տեսութիւն. Մամուլ. Թիֆլիսի վա-
ճառականների ընդհանուր ժողովը. Նամակ Բա-
թումից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Քաղաքական տեսութիւն. Նամակ Պարս-
կաստանից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Նամակներ Մովսիսյից.

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Դիտարկութիւն կայ Պուշկինի ծննդ-
դեան հարկումնայ յօդուանի յիշատակը
յաւերժացնել մի գեղեցիկ գործով ևս,
այն է առաջինայ շնչան հրաւիրել գրող-
ները համաժողով Պետերբուրգում:
Այդպիսի ժողով դեռ տեղի չէ ունեցել
Ռուսաստանում, թէև մամուլը և գրական-
նութիւնը վաղուց քաղաքացիութիւն են
ստացել և կազմակերպել են գրական աշ-
խատանքով ապրող անձանց մի մեծ դասա-
կարգ: Ժողովի ծրագրի մէջ գտնուում են չե-
զեղական հարցերը. կանոնադրել գրական ձեռ-
նարկողներին և գրական աշխատանքում
նրանց յարաբերութիւնը, գրական էստի-
կայի կամ վարքի խնդիրների ընտելութիւ-
նը, գրողների նիւթական վիճակի
ապահովութիւնը, մամուլի ներկայ դրու-
թիւնը և կարելիք երբ և մամուլի վի-
ճակագրութիւնը: Այս ընդհանուր
քաղաքացիական մէջ մտնում են բազմաթիւ
մանր հարցեր, որոնց վերաբերութեամբ
կարող են լինել մանրամասն մշակութեան
ենթարկված զեկուցումներ:

Մամուլի և գրականութեան գործողնե-
րի միասին խմբակը և իրանց կարիքների
մասին խորհրդակցելը վաղուց զգացված
մի պահանջ է, որը սակայն մինչև այժմ
չէ կարողացել իրագործվել: Մամուլը և

գրականութիւնը այնպիսի մեծ ոյժ են
կազմում ներկայումս հասարակական կեան-
քի մէջ, այնպիսի մեծ ազդեցութիւն ու-
նեն պետական և ժողովրդական գործերի
մէջ, իսկ մամուլի գործողների վիճակը,
թէ՛ իրաւաբանական, թէ՛ հասարակական
և թէ՛ նիւթական տեսակետներից այնքան
կարևորութիւն է ստացել, որ անհրաժեշ-
տութիւն է զգացվում ոչ միայն նպաստել
մամուլի գործողների փոխադարձ շփման
և խորհրդակցութեան, այլ և ձեռնարկել
օրէնսդրական մի քանի բարեփոխութիւն-
ներ: Մինչև այժմ անկատար և թերի
են հեղինակների իրաւունքների, հրատա-
րակիչների և գրական աշխատանքների
իրաւասութեան, գրական զեղծումների և
չարագործութիւնների վերաբերեալ օրէնք-
ները:

Ժողովին կարող են ներկայ լինել պար-
բերական մամուլի բոլոր օրգանների կող-
մից ներկայացուցիչներ և գրական աշխա-
տանքով ապրող անձինք: Ցանկալի է, որ
Անդրկովկասից, ուր մամուլը բաւական
զարգացած է և գրական խօսքը զբաղւած է
իր համար որոշ տեղ հասարակական կեան-
քի մէջ, պատրաստվին գնալու ժողովին
մեր մամուլի և գրական շրջանների կող-
մից ներկայացուցիչներ: Մեր երկրի ունի
իր առանձնայատկութիւնները, որոնք յայտ-
նի դրօշմ են դնում մամուլի և գրական-
նութեան զարգացման վրա: Թէ՛ այդ առ-
անձնայատկութիւնները ներկայացնելու
ժողովի ընտելութեան, թէ՛ ժողովի պա-
րագիծները հետ ծանօթանալու և թէ՛
գրական խօսքի ներկայացուցիչների հետ
կենդանի շփում ունենալու կարևորու-
թիւնը այնքան մեծ է, որ պէտք է մեր
գրական գործողները առանձին ուշադրու-
թեամբ վերաբերվին դէպի այդ համա-
ռուսական ժողովը:

րութեան և համալսարանի կողմից: Մուտքն
այդ ժողովին հրաւիրատուներով էր և տեղի ու-
ղութեան պատճառով՝ ներկայ պէտք է լինէր
հասարակութեան շատ սահմանափակ թիւ—հա-
մալսարանի պրոֆէսորներ, ուսուցիչներ
ընկերութեան անդամներ, բանաստեղծի ազգա-
կաններ, զանազան ընկերութիւնների պատգա-
մաւորութիւններ, բարձրատիւն անձինք, պա-
տուաւոր իւրեր և այլն: Մեծ դժուարութեամբ
ինձ աջողից են ներկայ լինելու այդ մեծաշուք
տօնին, որի նմանը, անկասկած, Ռուսաստանի
անդամնիկ համալսարանը դեռ չէր տեսած իր
պատերի մէջ: Քաղաքիս գեներալ-նահանգա-
պետ Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչը գա-
լուն պէս՝ սկսելից հանդէսը Գաւիճին կից հա-
մալսարանի ընդարձակ սրահի անապատական
կոնսերվատորիայի դիւրեկտոր Սաֆօնովի ղեկա-
սենեակից լինուց քրիստոնէական կանոնադ-
րութեամբ, որից յետոյ ամբիօն ելաւ համա-
լսարանի ընկերութիւնը: Նա մի քանի վերջ
նութիւնով մեծ բանաստեղծի անուան ու յիշա-
տակին, ի միջի այլոց, համալսարանի կողմից
ողջունեց բանաստեղծի ներկայ գտնվող ազգա-
կաններին և Պուշկինի ժամանակակից ու ընթի-
թողի հետ մօտ ծանօթ միակ կենդանի մնացած
տիկին Նաչչոկինային—86 տարեկան մի աղե-
կարդ կնոջ, որ առանձին հրաւիրանքով նոյն-
նիս բուռն ծափահարութիւններով միացան և
հանդիսականները: Բեկտորի յետոյ ամբիօն
բարձրացաւ ուսուցիչների ընկերութեան
անդամներ և գրականութեան մէջ պատուաւոր
տեղ բռնող պրոֆէսոր Ստորոժնիկո, որի ճառը
լի էր խորին զգացմունքով ու իմաստով: Այսօր-
վայ հանդէսը մի նշանաւոր երեւոյթ է մեր ա-
ռօրեայ դժգոյն կեանքում—այսպէս սկսեց պի-
պրոֆէսորն իր ճառը.—սա մի մեծ տուն է և
ընդ սմին բանաստեղծական տօն: Սա ոչ թէ
միայն ուսուսման բանաստեղծի ծննդեան
հարկումնակի օրն է, այլ, կարելի է ասել, սա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Պուշկինեան տօները արձագանգները դեռ
հնչում են Ռուսաստանի զանազան կողմերում:
Զուր չէր ասում ուսուցիչ մի լրագրի, թէ միայն
մայիսը չի լինի Պուշկինեան, այլ համարեա ամ-
բողջ 1899 թնականը: Առումնասիրութիւննե-
րի, ճառերի յօդուանների այն ահալին կոյտե-
րի մէջ, որոնք համարեա ամեն օր դուրս են
գալիս տղազարական մամուլի տակից՝ հիաց-
մունք, գովասանք և օրհնութիւն ենք տեսնում:
Սե սակայն այդպիսի ընդհանուր երկրպագու-
թեան մէջ միացած մարդիկ մըքան տարբեր-
ութիւններով: Ամենք խոսել են ծխում. բայց
այդ ծխի մէջ, ինչպէս միշտ և ամեն տեղ,
գործ ունեն և փառքիցիների ձեռքերը: Պուշ-
կինը, ինչպէս յայտնի է, դափնիների վրա չէր
հանգստանում իր կենդանութեան ժամանակ:
Իրաւոր երկրպագուների հետ կային և այնպի-
սի սե հողիներ, որոնք թունաւորում էին նրա
կեանքը, ստոր մատուցութիւններ էին անում,
մի խօսքով մահ և ոչնչութիւն էին ցանկանում
նրան: Իրանք նրա դրական հակառակորդներն
էին, խառնար որդիներ, որոնց համար ամեն մի
լուսաւոր գաղափար, ամեն մի վերանորոգող
խօսք սարսափելի էր: Բաւարականները սե-
րունդներ են թողել, և Պուշկինի յիշատակի առ-
ջալ այժմ դուրս իշխողներից շատերը հարա-
պատ որդիներ են այն հայրերի, որոնք մի ժա-
մանակ նեղում և ջեխտում էին բանաստեղ-
ծին: Ահա տօնախմբութիւնների ժամանակ այդ
հարապատ ժառանգներին է դիմում ուսու-
նաստեղծներից մէկը, Տան, որ «ЭВЗН» ամսա-
գրի մէջ գտնուել է մի գեղեցիկ ոտանաւոր,
ուղղած զբոյս առաջնորդներին:

Ով ուզում է՝ թող լուէ, ասում է նա.—
բայց ես չեմ լուի: Սուրբ հանդեսում ինձ հա-

մար ատելի է կեղծիքը և ես անամօթ լա-
բեութեան երեսին կը չարտեմ դանակի պէս
սրած պատժող յանդիմանութիւն:

Դրի առաջնորդներն բանաստեղծը հրամայ-
ում է թողնել տօնը:

Երբ երգելը կորաւ, դուք ծնված չէիք,
բայց այն վշտալի վախճանը նոյն այդ տեսակ
ձեռքերի գործ է: Զեր հայրերն էին ցանցեր
փռում նրա համար և դիտում էին իրանց գո-
հին, ինչպէս սարդը թիթեռնիկին: Զեր հայ-
րերը չէին պէս հայածում էին թափառա-
կանին և օր ու գիշեր հաջոյ էին բարձրա-
ցնում... Բայց դուք... դուք նրանցից վատ էք:
Իսկ ձեր ամբողջ ստորութիւնը նոյն իսկ
փոխում էք սե գրօնների հետ, վաճառք էք
հանում բաժանանքը, փողոցում, ցեղի մէջ
օդուներ էք հնձում: Թողէք մեր տօնը: Մեզ
հարկաւոր չեն այնպիսի վաճառքի պարգե-
ները: Յետ վերջից նրանց: Իսկ չէք կարող
պատիւ գնել հիացմունք արտայայտող ծա-
մածութիւններով: Մեզ համար թանկագին
է այս օրը: Համազգային սրբութեան առաջ
հաւաքվել են այն ամենքը, որոնց կրակոտ
սրտերը գեղեցիկ և աղաւթ ցնորներով են
կերակրվում, հանդուգնաւ երգչի ժառանգու-
թեամբ: Սե թանկագին է մեզ համար երգիչը,
որի ոսկի լարերը հնչում էին երկրի վրա,
ինչպէս թռչող թևեր, և խաղաղութեան
մէջ սովորեցնում էին սիրել և հասկանալ
բարին ու գեղեցիկութիւնը: Բայց դուք ինչու
էք եկել կեղծ հիացմունքով. ինչպէս յանդու-
նեցաք այդպէս անամօթաբար կանգնել առ-
ջիւղում, երբ ամեն մէկի բերանից մի աղաւթ
զուլանքով պատրաստ է դուրս թռչել շե-
ռացիք: Երբ հարկաւոր է ձեր անպիսի ամօթը,
բայց մեղանք ոչ որ չի կանգնել ձեզ հետ մի
շարքում, ձեր ձեռքը սեղմելով չի ապականի
իր ձեռքը: Սե թէ բանաստեղծի արձանը իր
պատուանդանի տներն է ձեռք իր օտա՛ նոյն-
պէս կը կիտէ յոյժերը, հին վէրքը նորից կը
գարթին նրա կրծքում և բերանի միջից ուղիղ
ձեր դէմքին կը գարնվեն արեան ցայտերը:

Մենք բերելք այս գեղեցիկ տողերը արձակ
թարգմանութեամբ իբրեւ մի հուժկու բողբոջ այն
մտաւոր ապականութեան դէմ, որ այնքան ա-

ղաւթաւ ձերմունքի պրոֆէսոր Կիւլեշկովու ճա-
ռը, որի մէջ նա խորին իմաստով պարզեց, թէ
ինչ նշանակութիւն ունեն առհասարակ մեծ
մարդկանց յօդուանները, նրանց անուան ու
յիշատակի հետ կապված տօնախմբութիւններն
ազգերի կեանքում: Նա ասաց, որ «մեծ մարդ-
կանց գործունէութիւնը նշանաւոր է ժողո-
վրդական մտաւոր և բարոյական զարգացման,
ժողովրդական կեանքի ուղղութեան, որ մեծ
մարդկանց միջոցով ամեն մէկը մեղանք նախ-
ում է իր հոգու ներքոյ, մեծ մարդիկ բացա-
տրում են մեզ մեր ինչ լինելը, նրանք կեանք
են տալիս ժողովրդական ինքնաճանաչութեան:
Յետոյ ճառախօսը մեծ սրամտութեամբ շարկա-
պեց Պուշկինի և Պետրոս մեծի գործունէու-
թիւնն ու նշանակութիւնը ուսուս ազգի կեան-
քում վերջին դարերում: Նա ասաց, որ այդ
դարերում «Ռուսաստանի մէջ կային երկու կա-
րեւորագոյն ժամանակաշրջաններ, որոնք նշա-
նաւոր հանդիսացան երկու մեծ մարդկանց գոր-
ծունէութեամբ: Այդ մարդիկը թէև գործում
էին իրարից հեռու ժամանակներում, բայց եր-
կուսի մէջ էլ կայ պատմական սերտ կապ:
Նրանցից մէկը կայսր էր, միւսը—պօետ: Ա-
պա ճառախօսն անցաւ Պուշկինի պօզիւային և
հետեւորական աչքի ընկնող փայլով ու չնորհալի
համեմատութիւններով պարզեց այդ պօզիւային
ամբողջ ոյժն ու բնաւորութիւնը: Միտաւոր և
սկսելից ուղիղները ընթերցումը զանազան ըն-
կերութիւնների և հաստատութիւնների ներկայ-
ացուցիչների կողմից: Մովսիսյի քաղաքագրու-
թիւնը կարգաց Դումայի կայացրած որոշումները—
Պուշկինի անունով հիմնել ժողովրդական լա-
րան հանդերձ ընթերցարանով, պահել որդե-
գիրներ, բանալ նախապատրաստական զարդ-
ներ, որոնք նոյնպէս կը կրեն բանաստեղծի ա-
նունը: Ներկայ եղող բազմութիւնը սրտազին
ողջունեց այդ գեղեցիկ որոշումները: Մեծաշուք
հանդէսը վերջացաւ երեկոյեան 6 ժամին:

Այ. Մատուրեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՕՍԿՎԱՑԻՑ

XV

Առաջին օր

Ներք օր իրար վրա Մովսիսյի արժանաւայել
կերպով տօնախմբեց Պուշկինի ծննդեան հա-
րիւրամեակը: Ներշնչված ազգային առաջադի-
մութեան, մայրենի կեանքի, գրականութեան
չանքի գաղափարով—մայրաքաղաքի ուսուս մը-
տածող հասարակութիւնն այս երեք օրվայ ըն-
թացքում չնորհակալ սրտով վկայեց իր ամբողջ
սէրն ու յարգանքը այն մարդուն, որ շարունակ
երգում ու քարոզում էր ազգային լոյս, ճշմար-
տութիւն, ազատութեան յաղթանակ... Այս ե-
րեք օրը, կարելի է ասել, ամենալուսաւոր օ-
րերն էին ուսուս ժողովրդի կեանքում, որոնց նը-
մանը, ով գիտէ, մէկ էլ էր քը կը տեսնի նա:
Այդպիսի օրեր դարերով են կրկնվում ազգերի
կեանքում: Հանճարեղ մարդիկ, որոնց անունը
դառնում է դարերի սեփականութիւն, ստեղծելի
պէս չեն ընտելում երկրիս երեսին: Կենդանի,
անշնչեղ մնացած դարերը իշխատակներ, որոնց
հետ կապված են սոսկ անհատի ազգային գոր-
ծունէութիւն, տաղանդի ոյժ, մտքի մեծութիւն
—հաղուազիւտ երեւոյթներ են մարդկային կեան-
քում: Սե ահա այսօր առաջին անգամ այդպիսի
մի հաղուազիւտ երեւոյթ տեսաւ ու տօնեց իր
ներքին կեանքում ամբողջ մտածող Ռուսաստանը:
Այդ նշանաւոր տօնին երեք օր անընդհատ մաս-
նակից էր և Պուշկինի բանաստեղծի ծննդավայր
—Մովսիս:

Մայիսի 26-ին արձանի առաջ տեղի ունեցած
փառաւոր հանդէսից յետոյ, որի մասին արդէն
գրել եմ նախընթաց համակուսմ, նոյն օրը 3
ժամին հանդիսաւոր ժողով էր նշանակված հա-
մալսարանի դահլիճում ուսուցիչների ընկե-

Դա միակ բարդութիւնը չէ: Կանադա, գործարարական գաղթականութիւն՝ կրնայ մերժուի որ Անգլիա կընդունի, ինչպէս որ Անգլիա կընդունի Կանադայի գահացում տուող Կիւլուրի ճարկներն: Այս բոլորը շատ խառնափնդու ճարկներն է գործնական լուծման մը յառաջնայ բարի կամքը: Այս խնդիրն ինչպէս ապշալի մի վրկալէ Հաւաքայի Սէյն Նաւաթորոյ պիտեանց ուշադրութեան: Պէտք չէ որ օրինակ տան:

Ծ թ ր
 բութի
 տապա
 նակէ
 կուտ
 եղելու
 դէն ի
 Խօս
 ցումն
 առաք
 կուդէ
 ևնան
 Պ,
 դ ա
 aux p
 72
 կուա
 առկա
 սկսան
 կայան
 լիթի
 համար
 Այդ
 հակա
 վեր դ
 ունե
 Հա
 բութի
 կորց
 բրաւ,
 եթէ է
 և
 պաշտ
 մը գլ
 դորո
 թիւն
 Այս
 պայմ
 վտան
 չին Ը
 մեծ ւ
 հակց
 հետ
 ուակ
 նակ
 խղով
 հաբը
 public
 կարծ
 Նո
 հարցն
 դերն
 Պէ
 դարձ
 ունէ
 պատ
 էն Այ
 Ինչ
 սին ւ
 բոլոր
 թիւն
 Մա
 գլուխ
 նի
 գաղո
 ները
 գելվ
 ծախ
 իրան
 հարկ
 բանը
 էշնը
 շնն
 միւս
 ղը,
 բերո
 հաւա
 տուր
 այդ
 նույ
 հրէա
 կենց
 ներկ
 այդ
 խնդ
 ները
 Այդ
 շրա
 թյոյ
 Այդ
 ֆառ
 անդ

Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27